




Օդափոխիչի աջակցության ծրագիր



Ինչպե՞ս է այն գործում:

Օդափոխիչի աջակցության ծրագիրը կառավարվում է Գլենդեյլի քաղաքապետարանի Համայնքային ծառայությունների և պուրակների բաժնի կողմից՝ օգնելու Գլենդեյլում ցածր եկամուտ ունեցող տարեցների համար տանն ապահովել զով ջերմաստիճան՝ օդի ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց: Ծրագիրը տրամադրում է մեկ անվճար օդափոխիչ՝ 60 և ավելի բարձր տարիքի այն իրավասու բնակիչներին, ովքեր ապրում են Գլենդեյլ քաղաքում և բավարարում են իրավասության այլ պահանջները:

Ծրագիրը հնարավորություն է տալիս բնակիչներին հարմարավետ մնալ իրենց տներում՝ հետևելով «Տանն ավելի ապահով է» հրամանին՝ COVID-19-ի տարածումը կանխելու նպատակով:

Ծրագիրը կմեկնարկի 2020 թվականի մայիսի 4-ին

Իրավասության չափանիշները.

- Դիմորդները պետք է լինեն 60 և ավելի բարձր տարիքի անձինք:
- Սպասարկման տարածքներն են՝ Գլենդեյլ, Մոնթրոզ, Վերդուգո և Լա Քրեսենթա:
- Անհրաժեշտ է բավարարել ցածր եկամտի պահանջները (տե՛ս դիմումը):
- Դիմորդները պետք է ունենան օդի ջերմաստիճանի զովացման անհապաղ կարիք. նրանք չպետք է ունենան կենտրոնական օդափոխիչ համակարգեր, սենյակային օդափոխիչներ կամ պատի օդորակիչներ:

Պահանջվող փաստաթղթերը.

- Պետական նույնականացման փաստաթուղթ՝ լուսանկարով՝ տարիքը և ինքնությունը ստուգելու համար
- Եկամտի մասին փաստաթուղթ՝ եկամտի իրավասությունը ստուգելու համար (տե՛ս դիմումը)

Ինչպե՞ս դիմել.

- **Առցանց**՝ այցելելով Glendaleca.gov/cspcares
- **Հեռախոսով**՝ զանգահարել (818) 548-3775՝ դիմումի գործընթացը սկսելու համար: Գործի մենեջերը կօգնի Ձեզ լրացնել ձևաթուղթը և ստուգել իրավասությունը:
- **Փոստով**՝ հետևյալ հասցեով՝ Adult Recreation Center C/O Cooling Fan Assistance Program, 201 E. Colorado St., Glendale, CA 91205

Քանակը սահմանափակ է, և դրանք դիմորդներին կբաժանվեն «առաջին դիմողին առաջինը սպասարկելու» հիմունքով: Օդափոխիչները կառաքվեն տներ, որպեսզի դիմորդները շարունակեն հետևել «Տանն ավելի ապահով է» հրամանին:

